Ծիլքար

Մակերես՝ 14.21կմ^2

Բնակչություն՝ 562

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Ապարան-Սպիտակ ավտոխճուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 52 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Մունճուխլի, Մունջուխլի, Մունջուղլի անվանումները: Ծիլքար է վերանվանվել է 1946 թ-ին:

Գյուղը տեղադրված է 2150 մ բարձրության վրա, թեք սարավանդի վրա: Անտառազուրկ է, կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

1873 թ-ին գյուղն ունեցել է 369, 1897 թ-ին՝ 567, 1939 թ-ին՝ 920, 1959 թ-ին՝ 444, 1979 թ-ին՝ 494 բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 545 մարդ, որից 49% տղամարդիկ են, 51%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 31%, աշխատունակները՝ 55%, հետաշխատունակները՝ 14%: Ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, կապի հանգույց, բուժկետ: Գյուղն ունի 148 տնտեսություն:

Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկային եւ կերային կուլտուրաների մշակությամբ: